ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« —— » _____ 2010թ. N. _____

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՊԵՐՃ ԲՈՇՆԱՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 1999թ օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն հասարակական-քաղաքական գործիչ Պերճ Բոշնաղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Չարենցի փողոցի հ.4 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախագծի հեղինակ
Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի
Հանձնաժողովի փոխնախագահ **Ա. Ասատրյան**

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՊԵՐՃ ԲՈՇՆԱՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում հասարակական քաղաքական գործիչ, ճարտարագետ-երկրաբան, 1999-2003թթ երկրորդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր, 1996-2004թթ ՀՀ պատերազմի, աշխատանքի, զինված ուժերի և իրավապահ մարմինների վետերանների խորհրդի նախագահ, պահեստի գնդապետ Պերճ Բոշնաղյանի ունեցած մեծ ավանդը հայրենի գիտության զարգացման, աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիրակության և վետերանների խնդիրների լուծման գործում:

Այս հուշատախտակի տեղադրման միջնորդությամբ Երևանի քաղաքապետարան նամակով դիմել է ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը (նամակը կցվում է, առդիր մեկ էջ):

2010թ. սեպտեմբերի 1-ին լրացավ Պերճ Բոշնաղյանի 90 ամյակը:

Նախագծի հեղինակ
Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի
հանձնաժողովի փոխնախագահ **Ա. Ասատրյան**